ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022թ. դեկտեմբերի 5-ից դեկտեմբերի 8-ը ք. Հունգարիայի Բուդապեշտ քաղաք գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**

Արմեն Գյուրջյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

ՀՀ ՊԵԿ համալիր հարկային ստուգումների վարչության տրանսֆերային գնագոյացման և հարկային համաձայնագրերի կիրառման բաժնի պետի տեղակալ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Հունգարիայի Բուդապեշտ քաղաք, 2022թ. դեկտեմբերի 5-ից 8-ը:

4. **Հրավիրող կողմը.**

Հարկային մարմինների ներեվրոպական կազմակերպություն (ՀՄՆԿ, IOTA):

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Գործուղման բուն նպատակն Հարկային մարմինների ներեվրոպական կազմակերպության հետ աշխատանքային փոխհարաբերությունների պահպանումն է, նրանց կողմից իրականացվող ծրագրերին մասնակցությունը, փորձի փոխանակումը, նոր ներդրվող ստանդարտների վերաբերյալ մասնագիտական գիտելիքների կատարելագործումը, տրանսֆերային գնագոյացման բաժնի կողմից իրականացվող գործառույթների իրականացման արդյունավետության բարձրացումը:

6. **Քննարկված թեմաները.**

Տնտեսության թվայնացումից բխող հարկային մարտահրավերները՝ մասնավորապես,

- ՏՀԶԿ հարկվող բազայի խեղաթյուրման ու շահույթի տեղաշարժին հակազդելու (BEPS) ծրագրի 2-րդ հենասյան ներդրմանը ուղղված զարգացումներ, օրենսդրական

նախագծերի ներկայացում, քննարկում: 2-րդ հենասյան հնարավոր ազդեցությունը անդրսահմանային ընկերությունների վրա,

- ԿՈՎԻԴ-19 ազդեցությունը տրանսֆերային գնագոյացման վրա,
- Տրանսֆերային գնագոյացման կարևորագույն ուղղություններից՝ ոչ նյութական ակտիվների արժեքի ստեղծման վերլուծություններ և փոխկապակցված կազմակերպությունների միջև ֆինանսական գործարքների գնագոյացում,
- Ֆինանսական գործարքների տրանսֆերային գնագոյացման փաստաթղթավորումը,
- Երկրների միջև փոխանակվող տեղեկությունների օգտագործման արդյունքում ռիսկի գնահատում,
- Տեղեկատվության պարտադիր բացահայտման կանոնները և տվյալների գործնական կիրառումը, ծրագրային ապահովումները,

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

6-րդ կետում նշված թեմաներով իրականացվել են քննարկումներ, մասնակից երկրները ներկայացրել են իրենց փորձը, դժվարությունները և առաջարկությունները հետագա փոփոխությունների վերաբերյալ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպման ընթացքում Հարկային մարմինների ներեվրոպական կազմակերպություն ներկայացուցիչների կողմից առաջարկվեց նմանատիպ հանդիպումներ իրականացնել որոշակի պարբերականությամբ, որպեսզի առկա մարտահրավերներին դիմակայելու նպատակով իրականացվող փոփոխությունների վերաբերյալ քննարկումները շարունակվեն և մասնակից երկրները հնարավորություն դեպքում իրենց փորձը կիսեն այլ անդամ պետությունների հետ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկվել է վերը նշված հարցերին անդրադառնալ նաև առցանց եղանակով կազմակերպվող քննարկումների ժամանակ, ինչպես նաև հնարավորինս բարձրացնել երկրների միջև փոխանակվող տեղեկատվության որակը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

12.12.2022թ.